ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3739-Ա «12» սեպտեմբերի 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.60 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆ ՍՈՆԱ ՀԵՆՐԻԿԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 39-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթն անցկացնելու նպատակով մասնագիտական հանձնաժողովի նիստի 2025 թվականի սեպտեմբերի 3-ի N 403 արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի սեպտեմբերի 9-ի հ. 02/09.2/29503-2025 գրությունը՝

1. Սոնա Հենրիկի Դանիելյանին՝ 2025 թվականի սեպտեմբերի 15-ից, 1 տարի փորձաշրջանով, նշանակել «Երևանի Վահան Տերյանի անվան հ.60 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ 2025 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2030 թվականի սեպտեմբերի 15-ը ներառյալ՝ ազատելով նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պարտականությունների կատարումից:

2. «Երևանի Վահան Տերյանի անվան հ.60 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սոնա Դանիելյանի փորձաշրջանի ղեկավար նշանակել «Երևանի Լևոն Միրիջանյանի անվան հ.155 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նաիրա Մանվելյանին:

3. Աշխատավարձն՝ ըստ հաստիքացուցակի:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ